# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-21/25

ք. Երևան «30» 04 2021թ.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավար–գլխավոր քարտուղար Առնակ Ավետիսյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ,Արմատ Գաստրո Գրուպե ՍՊԸ -ի, ի դեմս տնօրեն Արեգ Գեվորգյանի որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է պաշտոնական պատվիրակությունների անդամների համար հյուրասիրության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 2000000(Երկու միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են 2021 թվականի ապրիլի 26-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի ,Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներե բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **20** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

**7.12** Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱԺ աշխատակազմ | « ԱՐՄԱՏ ԳԱՍՏՐՈ ԳՐՈՒՊ » ՍՊԸ |
| ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19 | Ք.Երևան, Թումանյան փ. 23/1 |
| ՀՎՀՀ 00008519 | ՀՎՀՀ 01287516 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Ամենիաբանկ ՓԲԸ |
| Հ/Հ 900011020089 | Հ/Հ 1570055606590100 |
| ՀՀ ԱԺ աշխատակազմի | Տնօրեն՝ Արեգ Գևորգյան |
| ղեկավար – գլխավոր քարտուղար՝ | |
| Առնակ Ավետիսյան | |
| ---------- | ---------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված N 1*
*« 30. 04 2021թ. կնքված*
*ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-21/25 ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսվածից չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | առավելագույն գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | Ժամկետը |
| 1 | 79111200/1 | Պատվիրակության անդամների համար կազմակերպվելիք պաշտոնական հյուրասիրությունը պետք է ներառի<br>1. Սառը խորտիկներ,<br>2. Աղցաններ,<br>3. Տաք խորտիկներ,<br>4. Ապուրներ,<br>5. Տաք ուտեստներ,<br>6. Խավարտներ,<br>7. Ալկոհոլային խմիչքներ,<br>8. Կոկտեյլներ,<br>9. Տաք ըմպելիքներ,<br>10. Զովացուցիչ ըմպելիքներ (նաև բնական),<br>11. Աղանդեր (խմորեղեն),<br>12. Միրգ:<br>***Մասնակիցը գնային առաջարկին կից պետք է ներկայացնի իր կողմից հաստատված ընդհանուր մենյուն՝ ըստ առավելագույն գների:( կից հավելված 1.1 )***<br>Վերջնական պատվերը համաձայնեցվում է պատվիրատուի հետ: | դրամ | 2000000 | 1 | Թումանյան 23/1 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.12.2021թ. |

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար – գլխավոր քարտուղար՝
Առնակ Ավետիսյան

---
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

« ԱՐՄԱՏ ԳԱՍՏՐՈ ԳՐՈՒՊ » ՍՊԸ
Ք.Երևան, Թումանյան փ. 23/1
ՀՎՀՀ 01287516
Ամենիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570055606590100
Տնօրեն Արեգ Գևորգյան

---
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 1.1
«30» 04 2021թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-21/25 ծածկագրով պայմանագրի

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵՆՅՈՒՆ՝ ԸՍՏ ԳՆԵՐԻ
## «ԱՐՄԱՏ ԳԱՍՏՐՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ - ՔԱՄԱՆՉԱ ռեստորան

ՀՀ դրամ

| ՔԱՄԱՆՉԱ ՌԵՍՏՈՐԱՆ | |
|---|---|
| Անվանում | 1 բաժին |
| 1. Նախաճաշ | |
| Արիշտա ձվով<br>Аришта с яйцом<br>Arishta with egg | 1600 |
| Տապակած կանաչի ձվով<br>Жареная зелень с яйцом<br>Fried greens with egg | 2400 |
| Տապակած պելմենի ձվով<br>Жареные пельмени с яйцом<br>Fried dumplings with egg | 1600 |
| Լոլիկով ձվածեղ<br>Омлет с помидорами<br>Omelete with tomatoes | 1400 |
| Բաստուրմայով ձվածեղ<br>Омлет с бастурмой<br>Omelete with basturma | 1600 |
| Ղավուրմայով ձվածեղ<br>Омлет с каурмой<br>Omelete with ghaurma | 2400 |
| Սնկով ձվածեղ<br>Омлет с грибами<br>Omlete with mushrums | 1400 |
| Պանրով ձվածեղ<br>Омлет с сыром<br>Omelete with cheese | 1400 |
| Ոլոռով ձվածեղ<br>Омлет с горохом<br>Omlete with peas | 1200 |
| Եփած ձու թարխունով<br>Вареные яйца с эстрагоном<br>Boiled eggs with tarragon | 1100 |
| Աջարական խաչապուրի<br>Хачапури по-аджарски<br>Ajarian Khachapuri | 1400 |
| Տավարի մսով նրբաբլիթ<br>Блины с говядиной<br>Pancakes with beef | 1400 |
| Կաթնաշոռով նրբաբլիթ<br>Блинчики с творогом | 1200 |

| | |
|---|---|
| Pancakes with cottage cheese | |
| Քամած մածուն մեղրով ընկույզով<br>Сцеженный мацони с медом<br>Strained matzoni with honey | 1200 |
| Քամած մածուն մուրաբայով<br>Сцеженный мацони с вареньем<br>Strained matzoni with jam | 1100 |
| 2. Նախուտեստ | |
| Հայկական պանրի տեսականի<br>Ассорти армянских сыров<br>Assortment of Armenian cheese | 2100 |
| Եվրոպական պանրի տեսականի<br>Европейское сырное ассорти<br>European cheese assortment | 6000 |
| Տնական մսի տեսականի<br>Домашнее мясное ассорти<br>Homemade meat assortment | 3900 |
| Ձկան տեսականի<br>Рыбное ассорти<br>Fish assortment | 7900 |
| Իշլի քյուֆթա<br>Ишли кюфта<br>Ishli kufta | 1800 |
| Տավարի մսով նրբաբլիթ<br>Блины с говядиной<br>Pancakes with beef | 1400 |
| Լցոնած սունկ<br>Фаршированные грибы<br>Stuffed mushrooms | 2100 |
| Ղավուրմա<br>Кавурма<br>Ghavurma | 3900 |
| Բանջարեղենի տեսականի<br>Овощной ассортимент<br>Vegetable assortment | 2100 |
| Կանաչու տեսականի<br>Ассортимент зелени<br>Assortment of greenery | 2000/2800 |
| Տնական թթվի տեսականի<br>Домашнее ассорти солений<br>Homemade assorted pickle | 1500 |
| Հայկական պահածոների տեսականի<br>Ассортимент армянских консервов<br>Assortment of Armenian canned food | 1900 |
| Սմբուկով ռոլլեր<br>Роллы из баклажанов<br>Eggplant rolls | 1600 |
| Պխալի<br>Пхали<br>Phali | 1600 |
| Կիտրոն ձիթապտուղ<br>Лимон оливки | 1500 |

| | |
|---|---|
| Lemon olives | |
| Հումուս<br>Хумус<br>Hummus | 1200 |
| Ռեժան<br>Режан<br>Rezhan | 1000 |
| Քամած մածուն<br>Сцеженный мацун<br>Strained matsun | 1000 |
| Թոնրի հաց և լավաշ<br>Хлеб и лаваш в тандыре<br>Bread and lavash in tandoor | 600 |
| 3. Աղցան | |
| Աղցան Արագած<br>Салат Арагац<br>Aragats Salad | 2600 |
| Ամառային աղցան<br>Летний салат<br>Summer salad | 1400/1800 |
| Ավելուկով, լոլիկով և քամած մածունով աղցան<br>Салат с щавелем, помидорами и сцеженным мацони<br>Salad with sorrel, tomatoes and decanted matzoni | 1400 |
| Թաբուլե<br>Табуле<br>Tabbouleh | 1400 |
| Թարխունով, հորած պանրով և խաղողով աղցան<br>Салат с эстрагоном, тертым сыром и виноградом<br>Salad with tarragon, grated cheese and grapes | 2200 |
| Կեսար աղցան<br>Салат Цезарь<br>Caesar Salad | 2300 |
| Հայկական Կապրիզե<br>Армянский Капризе<br>Armenian Capricee | 3900 |
| Հունական<br>Греческий<br>Greek | 2200 |
| Հավի կրծքամսով, քինուայով և թարմ բանջարեղենով աղցան<br>Салат с куриной грудкой, кинуой и свежими овощами<br>Salad with chicken breast, quinoa and fresh vegetables | 2200 |
| Տավարի մսով, սմբուկով և ընկույզով աղցան<br>Салат с говядиной, баклажанами и орехами<br>Salad with beef, eggplant and nuts | 2900 |
| Քամած մածունով, վարունգով և ընկույզով աղցան<br>Салат с сцеженным мацони, огурцом и орехами<br>Salad with strained matzoni, cucumber and nuts | 1200 |
| 4. Տոլմա | |
| Ամառային տոլմա | 2900 |

| | |
|---|---|
| Летняя долма<br>Summer dolma | |
| Թփով տոլմա<br>Долма из виноградных листьях<br>Dolma of grape leaves | 2400 |
| Կաղամբով տոլմա<br>Долма с капустой<br>Dolma with cabbage | 2300 |
| Տեսականի<br>Ассорти<br>Assortment | 6500 |
| Տոլմա գառան մսով<br>Долма из ягненка<br>Dolma with lamb | 3800 |
| 5. Ապուր | |
| Սպաս<br>Спас<br>Spas | 1000 |
| Սպաս իշլի քյուֆթայով<br>Спас с ишли кюфтой<br>Spas with ishli kufta | 1600 |
| Դդմով կրեմ ապուր<br>Тыквенный крем-суп<br>Pumpkin cream soup | 1400 |
| Հավապուր<br>Куриный суп<br>Chicken soup | 1100 |
| Բորշչ<br>Борщ<br>Borsch | 1400 |
| Լոբով ապուր<br>Bean Soup<br>Суп из фасоли | 1200 |
| Ավելուկով ապուր<br>Суп с щавелем<br>Soup with sorrel | 1200 |
| Խաշ<br>Хаш<br>Khash | 2300 |
| 6. Տաք ուտեստ հորթի մսով | |
| Գառնի յարախ<br>Гарни Ярах<br>Garni yarakh | 1900 |
| Իշլի քյուֆթա<br>Ишли кюфта<br>Ishli kufta | 2000 |
| Արիշտա դավուրմայով<br>Arishta with ghavurma<br>Ариштa с гавурмой | 3400 |
| Տժվժիկ | 1900 |

| | |
|---|---|
| Тжвжик<br>Tzhvzhik | |
| Քալագյոշ<br>Калагёш<br>Kalagyosh | 3400 |
| Տավարի խաշլամա<br>Хашлама из говядины<br>Khashlama of beef | 3500 |
| Թավա կոտլետ պանրով<br>Тава котлета с сыром<br>Pan fried cutlet with cheese | 3800 |
| Տապակա Արմավիր<br>жареный Армавир<br>fried "Armavir" | 5800 |
| Երևանյան տապակա Արենի<br>Ереванское жаркое Арени<br>Yerevan roast "Areni" | 6400 |
| Երևանյան տապակա Նաիրի<br>Ереванское жаркое Наири<br>Yerevan roast "Nairi" | 6200 |
| Գինեփ դամածո<br>Гинеп дамацо<br>Ginep damatso | 12000 |
| **7. Տաք ուտեստ խոզի մսով** | |
| Լցոնված չալաղաջ Եղեգնաձոր<br>фаршированные корейки Ехегнадзор<br>Stuffed pork loin Yeghegnadzor | 6500 |
| Լոռվա ջեռեփուկ<br>Лорийская запеканка<br>Lorri casserole | 5700 |
| Տապակա Մարզպան<br>Жареный "Марзпан"<br>Fried "Marzpan" | 2600 |
| **8. Տաք ուտեստ գառի մսով** | |
| Գառան խաշլամա<br>Хашлама из ягненка<br>Lamb Khashlama | 4500 |
| Սյունիքի խաշնտուր<br>Сюникский хашнтур<br>Syunik khashntur | 8900 |
| Գառան թիակ փռում<br>Лопатка ягненка в печи<br>Lamb shoulder in the stove | 11500 |
| Գինեփ դամածո<br>Гинеп дамацо<br>Ginep damatso | 14500 |
| **9. Տաք ուտեստ հավի մսով** | |
| Նազելի | 3000 |

| | |
|---|---|
| Назели<br>Nazeli | |
| Հարիսա<br>Ариса<br>Harisa | 1500 |
| Տապակա խոխոբ<br>Жаркое хохоб<br>Fried khokhob | 3000 |
| Տապակած ճուտ<br>Жареный Цыпленок<br>Fried Chicken | 2700 |
| Արագածոտնի հագանի<br>Агани Арагацотна<br>Hagani of Aragatsotn | 3500 |
| 10. Տաք ուտեստ ձուկ | |
| Խորոված իշխան<br>Шашлык из ишхана<br>Ishkhan barbecue | 3700 |
| Խաշած իշխան բանջարեղենով<br>Вареный ишхан с овощами<br>Boiled ishkhan with vegetables | 4200 |
| Սաղմոն Կրակի վրա<br>Лосось на огне<br>Salmon on fire | 8500 |
| Խորոված թառափ<br>Запеченный осетр<br>Grilled sturgeon | 9500 |
| 11. Վրացական խոհանոց | |
| Խինկալի մսով 4 հատ<br>Хинкали с мясом 4 шт.<br>Khinkali with meat 4 pcs. | 300 |
| Խինկալի պանրով 4 հատ<br>Хинкали с сыром 4 штуки<br>Khinkali with cheese 4 pcs. | 300 |
| Տապակած խինկալի մսով 4 հատ<br>Жареный хинкали с мясом 4шт<br>Grilled khinkali with meat 4 pcs | 350 |
| Տապակած խինկալի պանրով 4 հատ<br>Жареный хинкали с сыром 4шт<br>Grilled khinkali with cheese 4 pcs | 350 |
| Իմերիթական խաչապուրի<br>Имеретинский хачапури<br>Imereti khachapuri | 2000 |
| Աջարական խաչապուրի<br>Хачапури по-аджарски<br>Ajarian Khachapuri | 1400 |
| Թավա սուլուգունի<br>Тава сулугуни | 1700 |

| | |
|---|---|
| Pan fried Suluguni | |
| Օջախուրի<br>Оджахури<br>Ojakhuri | 2500 |
| 12. Այրվող աղ | |
| Հորթի ֆիլե աղի մեջ<br>Филе телятины в соли<br>Veal fillet in salt | 29000 |
| Կարմիր իշխան աղի մեջ<br>Красный ишхан в соли<br>Red ishkhan in salt | 17000 |
| Հավ աղի մեջ<br>Курица в соли<br>Chicken in salt | 15000 |
| 13. Ընկերական | |
| Խորոված տեսականի<br>Ассорти шашлыка<br>Barbecue assortment | 45000 |
| Քամանչա տեսականի 1<br>Ассортимент Каманча 1<br>Kamancha assortment 1 | 32000 |
| Քամանչա տեսականի 2<br>Ассортимент Каманча 2<br>Kamancha assortment 2 | 37000 |
| 14. Խորոված և Քյաբաբ | |
| Խորոված խոզի չալաղաջ<br>Шашлык из корейки свинины<br>Pork loin barbecue | 3800 |
| Խորոված խոզի մատներ<br>Шашлык из ребрышек свинины<br>Barbecue pork ribs | 3600 |
| Խորոված խոզի փափկամիս<br>Шашлык из свиного филе<br>Pork fillet barbecue | 3400 |
| Խորոված տավարի սուկի<br>Шашлык из говяжьей вырезки<br>Beef tenderloin barbecue | 4600 |
| Խորոված տավարի ֆիլե<br>Шашлык из говяжьего филе<br>Beef fillet shish barbecue | 3900 |
| Խորոված գառ<br>Шашлык из ягненка<br>lamb barbecue | 3800 |
| Խորոված հավ<br>Курица на гриле<br>Grilled Chicken | 2200 |
| Խորոված իշխան<br>Шашлык из ишхана<br>Ishkhan barbecue | 3700 |
| Խորոված թառափ 1կգ<br>Шашлык из осетрины 1кг | 9500 |

| | |
|---|---|
| Sturgeon barbecue 1 kg | |
| Խորոված սունկ<br>Шашлык из грибов<br>Grilled mushrum | 1400 |
| Խորոված կարտոֆիլ<br>Запеченный картофель<br>Grilled potatoes | 700 |
| Խորոված բանջարեղեն<br>Овощи на гриле<br>Grilled vegetables | 1600 |
| Տավարի քյաբաբ<br>Кебаб из говядины<br>Beef kebab | 1400 |
| Հավի քյաբաբ<br>Куриный кебаб<br>Chicken kebab | 1200 |
| Գառան քյաբաբ<br>Кебаб из ягненка<br>Lamb Kebab | 1600 |
| **15. Խավարտ** | |
| Լցոնած սունկ<br>Фаршированные грибы<br>Stuffed mushrooms | 2100 |
| Տապակած բանջարեղեն<br>Жареные овощи<br>Fried vegetables | 1600 |
| Հաճարով և սնկով փլավ<br>Плов с полбой и грибами<br>Pilaf with spelt and mushrooms | 1400 |
| Արիշտա<br>Аришта<br>Arishta | 1000 |
| Կարագով տապակած կարտոֆիլ<br>Картофель жареный на масле<br>Potatoes fried in butter | 1200 |
| Խորոված կարտոֆիլ<br>Запеченный картофель<br>Grilled potatoes | 700 |
| Խորոված բանջարեղեն<br>Овощи на гриле<br>Grilled vegetables | 1600 |
| Խորոված սունկ<br>Шашлык из грибов<br>Grilled mushroom | 1400 |
| **16. Սոուս** | |
| Սխտորի սոուս<br>Чесночный соус<br>Garlic sauce | 500 |
| Ղարս | 500 |

| | |
|---|---|
| Карс<br>Kars | |
| Կծու<br>острый<br>hot | 500 |
| Տխեմալի<br>Тхемали<br>Themali | 500 |
| Նարշարաբ<br>Наршараб<br>Narsharab | 500 |
| 17. Գարեջրի հետ | |
| Կծու հավաքածու<br>Пряный набор (острый)<br>Spicy set (hot) | 3700 |
| Չորահաց սխտորով<br>Сухарики с чесноком<br>Crackers with garlic | 1200 |
| Բանջարեղեն կիտրոնով<br>Овощи с лимоном<br>Vegetables with lemon | 1000 |
| 18. Աղանդեր | |
| Պարֆե կարամել Parfe Caramel Карамельное Парфе | 2800 |
| Գաթա<br>Гата<br>Gata | 1500 |
| Փախլավա<br>Пахлава<br>Pakhlava | 1600 |
| Մեղրով տորթ<br>Медовый торт<br>Honey cake | 1400 |
| Էկլեր<br>Эклер<br>Eclair | 1300 |
| Թռչնի կաթ<br>Птичье молоко<br>Bird's milk | 1500 |
| Շոկոլադե երշիկ<br>Шоколадная колбаса<br>Chocolate Sausage | 1200 |
| Չիզքեյք<br>Чизкейк<br>Cheesecake | 1800 |
| Պաղպաղակ մեղրով և ընկույզով<br>Мороженое с медом и орехами<br>Ice cream with honey and nuts | 1500 |
| Ղափամա<br>Хапама | 3200/25000 |

| | |
|---|---|
| Ghapama | |
| Քաղցր Քամանչա<br>Сладкая "Каманча"<br>Sweet "Kamancha" | 11000 |
| Մրգով ափսե<br>Тарелка с фруктами<br>A plate of fruit | 4500/8000 |
| Սպասարկման վճար<br>Плата за обслуживание<br>Service fee | 10% |
| **Բար** | |
| **1. Սուրճ/թեյ** | |
| Թարմ մրգային թեյ | 1800 |
| Չիչխանով թեյ | 1800 |
| Հատապտղային/նուռ | 1800 |
| Սև/կանաչ | 900 |
| Ուրց/նանա | 1000 |
| Կարկադե | 1000 |
| Ժասմին | 1000 |
| Բերգամոտ | 1000 |
| Իմբիր | 1200 |
| Մրգային թեյ | 1200 |
| Կապուչինո | 1500 |
| Ամերիկանո | 1000 |
| Էսպրեսո | 1000 |
| Լատե մակիատո | 1400 |
| Ֆրապե | 1400 |
| Գլյասե | 1600 |
| Սև սուրճ/փարիզյան | 700 |
| Տաք շոկոլադ | 1500 |
| **2. Զովացուցիչ ըմպելիք** | |
| Ջուր/գազով ջուր | 500 |
| Վրացական լիմոնադ | 700 |
| Զովացուցիչ ըմպելիք | 500 |
| Բնական հյութ | 700 |
| Թան 1 լ | 1400 |
| Մածնաբրդոշ 1 լ | 1800 |
| Կոմպոտ | 1600 |
| Տոնիկ | 1000 |
| Էներգետիկ ըմպելիք | 2000 |
| **2. Լիմոնադ 1 լ** | |
| Ցիտրուսային | 3500 |
| Հատապտղային | 3500 |
| Լայմ նանա | 3000 |
| Մարակույա | 3200 |
| **3. Թարմ քամած հյութեր** | |
| Խնձոր | 1200 |
| Գազար | 1000 |

| | |
|---|---|
| Նարինջ/թուրինջ | 1800 |
| Նուռ | 4200 |
| **4. Գարեջուր** | |
| Դարգետ պիլսներ/ծիրան | 1300 |
| Կիլիկիա/գյումրի | 900 |
| Կիլիկիա լցնովի 0,33/0,5 | 700/900 |
| Գյումրի լցնովի 0,33/0,5 | 700/900 |
| Հեյնիկեն | 1500 |
| Կորոնա | 1700 |
| **5. Կոնյակ** | |
| Դվին | 8000 |
| Նաիրի | 6000 |
| Տոնական | 4500 |
| Ախթամար | 2800 |
| Ընտիր | 1800 |
| Օհանյան 15 XO | 4400 |
| Օհանյան 10 | 2600 |
| Օհանյան 7 | 1800 |
| Օհանյան 5 | 1500 |
| **6. Վիսկի** | |
| Չիվաս 18 | 5000 |
| Չիվաս 12 | 2800 |
| Ջեկ դենիելս | 2500 |
| Ջեյմսոն | 1800 |
| **7. Ջին** | |
| Հենդրիքս | 3200 |
| Բոմբեյ | 1800 |
| **8. Ռոմ** | |
| Բակարդի բլեք | 1600 |
| Բակարդի սուպերիոր | 1600 |
| **9. Տեկիլա** | |
| Պատրոն | 4700 |
| Օլմեկա | 1700 |
| **10. Վերմուտ** | |
| Յագերմաստեր | 1700 |
| Մարտինի/Էքստրա դրայ | 1200 |
| **11. Փրփրուն գինի** | |
| Քյոշ | 17000 |
| Աստի մարտինի | 18000 |
| Կաֆե դե պաղի | 15000 |
| Կարաս | 8000 |
| Տակառ | 8000 |
| **12. Սպիտակ գինի** | |
| Կարաս | 7500 |
| Կուռ | 9000 |
| Տակառ | 7000 |
| Ա Թել | 6000 |

| | |
|---|---|
| Ոսկեվազ | 5500 |
| Գոշ | 9000 |
| Ա Թել Մուսկատ | 6500 |
| Զուլալ | 7500 |
| **13. Վարդագույն գինի** | |
| Տակառ | 7500 |
| Ոսկեվազ | 5500 |
| Ա Թել | 6000 |
| Զուլալ | 8500 |
| **14. Կարմիր գինի** | |
| Կարաս | 9000 |
| Կուռ | 9000 |
| Զորահ երազ | 90000 |
| Կատարո | 11000 |
| Տակառ ռեզերվ | 13000 |
| Կարաս ռեզերվ | 18000 |
| Կուռ ռեզերվ | 18000 |
| Կարասի զորահ | 21000 |
| Ոսկեվազ | 6000 |
| Սարգոն | 8000 |
| Իջևան | 6000 |
| Տնական գինի | 4500 |
| Ա Թել | 6500 |
| Զուլալ | 7500 |
| **15. Մրգային օղի** | |
| Կենսատու մամուխ | 21000 |
| Կենսատու վայրի տանձ | 18000 |
| Կենսատու ծիրան | 16000 |
| Արցախ թութ գոլդ | 18000 |
| Արցախ հոն | 17000 |
| Արցախ թութ սիլվեռ | 16000 |
| Արցախ ծիրան | 12000 |
| Իջևան թութ | 10000 |
| Իջևան հոն | 10000 |
| Իջևան ծիրան | 10000 |
| Իջևան խաղող | 10000 |
| **16. Օղի** | |
| Գրեյ գուզ | 24000 |
| Կրեմլին | 12000 |
| Ռուսկի ստանդարտ | 7500 |
| Ռուսկի ստանդարտ պլատինիում | 11000 |
| Բելուգա | 12000 |
| Օհանյան այս | 10000 |
| Օհանյան | 8500 |
| Աբսոլյուտ | 8500 |
| Կոսկենկորվա | 7500 |
| Ցարսկի օրիգինալ | 6000 |

| | |
|---|---|
| Ստրունբրաս | 6500 |
| Ստալիչնայա | 7000 |
| Սերեբրո սիլվեռ | 6500 |
| Սերեբրո գոլդ | 6500 |
| Նեմիրով Դելյուկս | 8500 |
| Գորալ | 8500 |
| **Ընդամենը** | **1386000** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար – գլխավոր քարտուղար՝
Առնակ Ավետիսյան

---
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

« ԱՐՄԱՏ ԳԱՍՏՐՈ ԳՐՈՒՊ » ՍՊԸ
Ք.Երևան, Թումանյան փ. 23/1
ՀՎՀՀ 01287516
Ամենիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570055606590100
Տնօրեն՝ Արեգ Գևորգյան

---
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
«30» 04 2021թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-21/25 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 79111200/1 | Ներկայացուցչական ծախս /4237/ | | | | 600000 | 600000 | 600000 | 1000000 | 1000000 | 1000000 | 2000000 | 2000000 | 2000000 | 2000000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար – գլխավոր քարտուղար՝
Առնակ Ավետիսյան

---
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

« ԱՐՄԱՏ ԳԱՍՏՐՈ ԳՐՈՒՊ » ՍՊԸ
Ք.Երևան, Թումանյան փ. 23/1
ՀՎՀՀ 01287516
Ամենիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570055606590100
Տնօրեն՝ Արեգ Գևորգյան

---
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«30» 04 2021թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-21/25 ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ _____ |
| հվհհ _____ | հվհհ _____ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«  » «  » 20  թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20  թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «  » «  » 20  թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 3.1
«30» 04 2021թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-21/25 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն